ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Հայր և որդի Գյոդակյաններ ՍՊԸ-ն ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/21 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	զինվորական մահճակալ	զինվորական մահճակալ	զինվորական մահճակալ	Հայր և որդի Գյոդակյաններ ՍՊԸ	Նվազագույն պարամետրերը Երկաթյա մահճակալ ներքնակով Մահճակալի արտաքին չափսերն են 88x208x200սմ (LxԵxԲ), համապատասխանաբար ներքնակի չափսերն են 80x200 սմ, որի հաստությունը պետք է լինի ոչ պակաս քան 20 սմ: Մահճակալի ներքնակի հիմքը, գլխի և ոտքերի հատվածները պետք է լինեն քանդովի, հավաքման ձևը պետք է լինի հեշտ, բայց միևնույն ժամանակ շատ ամուր և աննկատ: Գլխի և ոտքերի հատվածները պետք է պատրաստված լինեն 40x40 մմ

					չափսի քառանկյուն խողովակներով, որոնց հաստությունը պետք է լինի ոչ պակաս քան 2 մմ, իսկ դեկորատիվ հատվածը պետք է պատրաստված լինի 20x10 մմ չափսի քառանկյուն խողովակներով: Ներքնակի հիմքը պետք է պատրաստված լինի 60x20 մմ չափսի քառանկյուն խողովակներով, որի հաստությունը պետք է լինի ոչ պակաս քան 2 մմ, իսկ ճաղավանդակները պետք է պատրաստված լինեն ոչ պակաս քան 20x20 մմ քառանկյուն խողովակներով, որոնց միջև հեռավորությունը պետք է լինի ոչ ավել քան 10սմ: Քանդման-հավաքման համար չպետք է օգտագործվեն երևացող հեղյուսներ, այլ պետք է լինեն ներկառուցված պարուրակային միացումներով և աննկատ հանգույցներով: Մահճակալը պետք է լինի ամուր, չունենա որևէ ճոճ կամ ճռռոց: Յուրաքանչյուր մահճակալ պետք է հնարավորություն ունենա օգտագործվել թե առանձին, թե մեկ այլ նմանատիպ մահճակալի հետ միասին որպես երկհարակնի ընհանուր կոնստրուկցիա:

					Յուրաքանչյուր 2 մահճակալի հետ տրամադրել 1 սանդուղք, որը նույնպես պատրաստված կլինի ամուր երկաթից, կունենա նույն տեխնիկական պարամետրերը, ինչ մահճակալը: Նախքան եռակցումը մետաղը պետք է յուղազերծվի հատուկ նյութերով, իսկ եռակցումից հետո անցնի եռակի շուշաթղթում և կարբոնային փայլեցում իդեալական որակ ստանալու համար: Անթույլատրելի է ցանկացած վատ զոդում այդ թվում նույնիսկ եռակցման մանր ճաքեր կամ խազեր, ինպես նաև վատ մշակված կամ նկատելի կարեր: Նախքան ներկումը մահճակալը պետք է պատված լինի գրունտային շերտով: Մահճակալը պետք է փոշեներկված լինի հարթ սև գույնով, իտալական արտադրության կամ համարժեք փոշեներկով, որը կպարունակի 0% փայլ: Ոտքերին պետք է լինեն պլաստիկե խցաններ: Մահճակալի հետ պետք է տրամադրել նաև ներքնակի չափսով սպիտակ գույն փայտանյութ ներքնակի տակ դնելու համար: Նախքան մատակարարումը արտաքին տեսքը և գույնը

					համաձայնեցնել պատվիրատուի հետ: Երաշխիքային սպասարկում՝ առնվազն 2 տարի: Ապրանքի տեղափոխումը, բեռնաթափումը պետք է իրականացնի Վաճառողն իր հաշվին: Բոլոր ծախսերը պետք է ներառված լինեն ապրանքի ընդհանուր արժեքի մեջ: Ապրանքը պետք է լինի նոր և չօգտագործված: Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, պայմանագրի կատարման փուլում, պետք է ներկայացնի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ կամ համապատասխանության սերտիֆիկատ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Айр ев ворди Гедакяннер в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/21 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
3					